

միայն Սպանիայի, այլ եւ գրեթէ ամէն տէրութեանց պաշտօնականներուն հաշար կ'արժէ:

Գաղթիս: յաղթութիւնն ի գլուխ տարաւ, Մադագասկարի մայրաքաղաքը՝ Տանանարիվը, առնուեցաւ, գաղղիական «հովանաւորութիւնը», հռչակուեցաւ քայց հիմայ յայտնի կ'ըլլայ թէ այս յաղթութիւնը շատ թանկագին եղաւ Գաղղիացոց համար, հիւանդութեամբ գրեթէ 15.000 առոյգ պատանիներ իրենց գերեզմանը գտան հոն: Գուշակեցինք թէ Հովանները պիտի չկարենան դէմ դնել գաղղիական զինուոց. քայց նոյն իսկ դարեր ետքը՝ Հովանները պիտի տուժել տան Գաղղիացոց՝ այս յաղթութիւնը:

Առատրիս-Հոսնգարիս: Վիեննայի քաղաքապետին Դ^ր Լուէզերի, կայսեր կողմանէ չհաստատուիլը, շատ յուզեց ոչ թէ միայն տեղւոյս բնակիչը, այլ նաեւ բովանդակ տէրութեան քաղաքներն ու զինուորը: Կը գուշակէին թէ «Ռուշիոյներ», եւ «Հիւրշեր», (= հրեայ) ամէն միզ պիտի թափեն, մանաւանդ օգնութեան առնելով Հունգարիոյ ներքին գործոց պաշտօնեայն՝ գՊր. Բանֆի, որ փութաց իսկ քաղաքապետին ընտրութեան նախընթաց օրն ի Վիեննա եւ իւր բոլոր ազդեցութիւնն ի գործ դրաւ արգելելու հաշար այս ընտրութիւնը: Բայց յայտնի է թէ՝ ժամանակիս պահանջումներէն յառաջ եկած այս անհրաժեշտ ընտրութիւնն, եթէ հաստատուի կամ ոչ, չի կրնար հրէից համար նպաստաւոր ըլլալ, այլ աւելի կը զրգոժ մտքերը եւ մեծ վտանգ կը սպառնայ Բաղննիի պաշտօնարանին անկմանը: Երեք նիստ ունեցաւ երեսփոխանաց ժողովը, երեքն ալ սաստիկ յուզեալ, եւ պաշտօնէից զահրեղը չկրցաւ խոյս տալ հարցապնդումներէն, քայց եթէ այնպիսի փախստի ծամբաներու դիմելով, որ այնչափ նպաստաւոր չէին, եւ երկրորդ նիստն առաջնէն աւելի անձկութիւն կը պատճառէր իրեն, երրորդը՝ երկրորդէն աւելի: Ձեռք առնուեցան բոնական միջոցներ, քայց օգնուոր... պիտի հաստատէ այս գուշակութիւնը թէ գրուած է արդէն Բաղննիի պաշտօնարանին մակտին վրայ, Մանէ, Դեկէղ, Փարէս:

Միացեալ Նահանք: Ընտրութիւններ կը կատարուին Միացեալ Նահանգներու գրեթէ բոլոր տէրութեանց մէջ. եւ ինչպէս կ'երեւայ առավաւարականք տեղի կու տան այս անգամ հասարակապետականներու, որոնք ստուար մեծամասնութեամբ կը գրաւեն ամէն կողմ՝ աթոռները: Կրնայ գուշակուիլ ուրեմն թէ ապագայ զահրեղն հասարակապետական պիտի ըլլայ, եւ այս կողմնակցութեան ազդեցութեամբը՝ Ամերիկայի եւ օտար ազգաց մէջ ի կախ մտացած խնդիրներն աւելի արագ շարժում պիտի առնուն դէպ ի երեւոյ լուծումով: Եւ արդէն հեռագիրը ծանոց թէ մեծ պատերազմիկ նաւ մը կու գայ դէպ ի Միջերկրական, միանալու համար օտար նաւատորմողներու, որոնց տարեկան շրջագայութիւններն այս անգամ ամիս մը կանխեցին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՌԻՍՈՒՄԵՆԿԱՆ

ԼԵՃՈՒԿԱՐԱՆԿԱՆ — Աշխարհաքար Լեզուի արդի վիճակը. 357:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ — Բոլիչ Բարունակ Պէյ Բոլիկեան Փէրուսիան. 360:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ — Գոյներու քաղաքութեան եղանակ ըստ Հնոց. 370:

ԳԻՏԱԿԱՆ — Ժննաց փոխնի գործածութիւնը. 371:

ԲԱՆԱՍՏԵՂԺԱԿԱՆ — Հրդեհ. 375:

ՈՒՂԵԳՐԱԿԱՆ — Սեւ ծովու ռուսական եզերքը. 375:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ — Հայ բժշկուհի մի Վիեննա. 377:

ՄԱՏԵՆԱՌՕՍՏԱԿԱՆ — Նախագիտելիք ռուսարանութեան. 379:

ԱՅԼԵՔԱՅԼ

ՄԱՆԱՄԱՆՈՒՐ — Մուկէի Զրանցքը. 386: — Գալիշի թղթը. 386:

ՆՈՐԱՄԱՆՈՒՐ — Հնդկ եղեգէ շնուած նրդին մը. 386:

ՕՆԱՌՈՒՄԻՏԻՒՆ. 387:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 387:



ՀՐԱՍԱՐԱՆԻՑ ԵՒ ՊԱՏԱՍԻՍԱՆՏՈՒ ԽՄԱՍԳՐ

Գ. ԱՄՓԱՅԵԼ Վ. ՊԱՐՈՆՉ

ՎԵՆԵՆԱ. ՄԻԻԹԵՐԵՆԱՆ ԶՊԱՐԱՆ